Արձանագրություն N 3

Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 5-ի, ժամը 15.00-ի նիստի

Օրակարգ

1. «Գենդերային բռնության դեմ պայքարը պետական մարմինների գործողություններում» միջազգային փորձի ներկայացում
2. «Գենդերային բռնության վերացման 2011-2014 թվականների ազգային ծրագրի» նախագծի ներկայացում
3. Ելույթներ, մտքերի փոխանակում

Մասնակցեցին

Ֆ. Բերիկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ *(հանձնաժողովի նախագահ)*
Գ. Հայրապետյան	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ներկայացուցչի տեղակալ
Տ. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ
Լ. Ղազարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ
Ն. Արզումյան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի եվրաինտեգրման վարչության իրավական բարեփոխումների բաժնի պետ
Կ.Սուջյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի միջազգային կազմակերպությունների վարչության մարդու իրավունքների բաժնի պետ
Գ. Ավագյան	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության կազմակերպման վարչության մոր և մանկան առողջության պահպանման բաժնի գլխավոր մասնագետ
Ս.Սարգսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տնտեսական քաղաքականության և ռազմավարության մշակման վարչության վիճակագրության և վերլուծությունների բաժնի առաջին կարգի մասնագետ
Մ. Աղաջանյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ
Ա.Ղազարյան	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ներկայացուցչի տեղակալի պաշտոնակատար

Ջ. Սարգիզովա	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի 'Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում' ծրագրի ղեկավար
Ի. Տեր-Մինասյան	Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի առաքելության գրասենյակի ղեկավար
Ա. Հովհաննիսյան	ՄԱԿԶԾ-ի ժողովրդավարական կառավարման և գենդերային հարցերով պատասխանատու
Ծ. Հարությունյան	ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ժողովրդավարության զարգացման ծրագրի ավագ օգնական
Ս. Գրիգորյան	ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի իրավաբանական բաժնի աշխատող
Ն.Ղազարյան	Ամերիկայի միջազգային զարգացման գործակալության առաքելության սոցիալական և առողջապահական ծրագրերի համադասող
Վ. Ասատրյան	'Մարդկային զարգացման միջազգային կենտրոն' հասարակական կազմակերպության փորձագետ
Գ.Արմաղանովա	'Հայաստանի համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա' հասարակական կազմակերպության փոխնախագահ
Լ. Ահարոնյան	'Կանանց ռեսուրսային կենտրոն' հասարակական կազմակերպության համանախագահ)
Ս.Վարդանյան	'Կանանց իրավունքների կենտրոն' հասարակական կազմակերպության նախագահ
Ա. Թանաշյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ *(հանձնաժողովի քարտուղար)*

Հանձնաժողովի նիստը բացեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ ***Ֆ. Բերիկյանը*** և հանձնաժողովի անդամներին ներկայացրեց նիստի օրակարգը, որից հետո խոսքը փոխանցեց «Գենդերային բռնության վերացման 2011-2014 թվականների ազգային ծրագրի» նախագիծը մշակող աշխատանքային խմբի անդամ ***Վ. Ասատրյանին*** ներկայացնելու համար օրակարգի 1-ին հարցը:

Վ. Ասատրյանը ներկայացրեց «Գենդերային բռնության վերացման 2011-2014 թվականների ազգային ծրագրի» նախագիծը մշակող աշխատանքային խմբի կողմից իրականացված աշխատանքները, մասնավորապես, գենդերային բռնության դեմ պայքարի ուղղությամբ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները: Նա նշեց. աշխատանքային խմբի կողմից քննարկվել է շուրջ 83, այդ թվում՝ զարգացած և զարգացող երկրների ռազմավարական ծրագրեր 1988-2010թ. ժամանակահատվածում: Ուսումնասիրված ծրագրերը տարբերվել են տերմինաբանության (տենդենցը գնում է «կանանց դեմ բռնություն» տերմինից՝

«Գենդերային բռնություն» տերմինի գործածմանը), ֆինանսական ներդրումների (50հազ. մինչև 50մլն. եվրո արժողությամբ) և ծրագրերի իրականացման ժամկետների (1-ից մինչև 5-ամյա) առումով: Սակայն դրանք, մեծամասամբ, նման են եղել ռազմավարական գերակայությունների տեսանկյունից՝ կանխարգելում, աջակցություն և հետապնդում: Աշխատանքային խմբի կողմից առանձնացվել են 15 ծրագրեր, որոնք առավել մոտ են եղել հայկական իրականությանը և դրանցում առաջարկված լուծումներից մի մասը հետագայում օգտագործվել են ազգային ծրագրի նախագիծը մշակելիս, իսկ մի մասից էլ հրաժարվել են առաջիկայում անիրատեսկան լինելու պատճառով: Ըստ էության ուսումնասիրությունը եղել է արդյունավետ և բավականին նպաստել է ազգային ծրագրի նախագծի մշակման աշխատանքներին:

Ֆ. Բերիկյանը օրակարգի 2-րդ հարցը ներկայացնելու համար խոսքը փոխանցեց «Գենդերային բռնության վերացման 2011-2014 թվականների ազգային ծրագրի» նախագիծը մշակող աշխատանքային խմբի անդամ *Ա. Թանաշյանին*: Նա ներկայացրեց գենդերային բռնության վերացման 2011-2014 թվականների, ինչպես նաև 2011 թվականի ազգային ծրագրի կատարումն ապահովող միջոցառումները, դրանց կառուցվածքը, գերակա ուղղությունները, նպատակներն ու ակնկալվող արդյունքները, ժամկետները և հնարավոր ֆինանսավորման աղբյուրները: Նա անդրադարձավ նաև գենդերային բռնության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին, դրանց կատարման ընթացքին և նախագծում այդ կապակցությամբ առաջարկված միջոցառումներին:

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ հանձնաժողովի անդամների կողմից եղան մի շարք առաջարկներ, հարցադրումներ և հայտարարություններ, մասնավորապես.

Վ. Աստարյանն առաջարկեց նախագիծը ներկայացնել ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի նախաձեռնությամբ վերջերս ստեղծված Գենդերային Թեմատիկ խմբի առաջիկա քննարկմանը, ինչը կնդարձակի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման հնարավորությունները և կաջակցի Կառավարությանն իր առջև դրված պարտավորությունների կատարմանը: Գ. Հայրապետյանը կարևորեց առաջարկը և, որպես Գենդերային Թեմատիկ խմբի համանախագահող, խոստացավ հետամուտ լինել դրա կատարմանը: Նա նշեց նաև, որ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը առաջիկա տարիների ընթացքում «գենդերային բռնության» կանխարգելման հարցը կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերում դիտարկելու է առաջնային խնդիրների շարքում:

Գ. Ավագյանը հարց բարձրացրեց նախագծի առաջիկա տարիների ֆինանսավորման վերաբերյալ, նշելով, որ դրանք հիմնականում իրականացվում են միջազգային կառույցների աջակցությամբ, իսկ պետության ներդրումները այս ոլորտում չնչին են: Հարցին պատասխանեց *Ֆ.Բերիկյանը,* հույս հայտնելով, որ ոլորտում վերին երկու տարվա ընթացքում տարվող արդյունավետ աշխատանքները հիմք կհանդիսանան մոտակա տարիների համար ակնկալելու պետական միջոցների ավելացմանը:

Ջ. Սարգիզովան հանդես եկավ հայտարարությամբ, հանձնաժողովի անդամներին ներկայացրեց նոյեմբերի 25-ից մեկնարկող «Ակտիվության 16-օրյակ

ընդդեմ գենդերային բռնության» ամենամյա քարոզարշավի շրջանակներում իրականացվելիք միջոցառումները և հրավիրեց համագործակցության: Այդ կապակցությամբ *Ս. Վարդանյանը* ներկաներին տեղեկացրեց 16-օրյակի շրջանակներում իրենց կազմակերպության կողմից նախաձեռնած ակցիայի մասին՝ ուղղված Զարուհի Պետրոսյանի մահվան պատճառների և բռնարարների բացահայտմանը և գործընթացի արդար լուծմանը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. ի գիտություն ընդունել Վ. Ասատրյանի հաղորդումը «Գենդերային բռնության դեմ պայքարը պետական մարմինների գործողություններում» միջազգային փորձի վերաբերյալ,
2. ի գիտություն ընդունել Ա. Թանաշյանի հաղորդումը «Գենդերային բռնության վերացման 2011-2014 թվականների ազգային ծրագրի» նախագծի վերաբերյալ,
3. հանձնարարել՝

ա/ հանձնաժողովի անդամներին՝ 1 շաբաթյա ժամկետում հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ Ա. Թանաշյանի կողմից ներկայացված «Գենդերային բռնության վերացման 2011-2014 թվականների ազգային ծրագրի» նախագծի վերաբերյալ:

բ/ «Գենդերային բռնության վերացման 2011-2014 թվականների ազգային ծրագրի» նախագիծը մշակող աշխատանքային խմբի անդամներին՝ հանձնաժողովի անդամների կողմից առաջարկությունները և դիտողությունները ստանալուց հետո 1 շաբաթյա ժամկետում լրամշակել նախագիծը և սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ֆ. Բերիկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Թանաշյան

/08.11.2010թ./